# ԵԳԻՊՏՈՍԱՑԻՆ

Ազնիւ Սիօն

Դու որ քանիցս Եգիպտոսի ուրախացուցած ես քո պատուական էջերդ մի քանիին նմա զոհելով, շնորհք ըրէ այս անգամ ևս հետեւեալ երկտողիկը հիւրընկալել, որով ինձ հետ Հայրենակիցներս եւս շնորհապարտ կ՚առնես քեզ.

Արևեան դպրոցը՝ որ հիմնարկուած է ազգասիրական ջանիւք Արևեան բարեջան Յակոբ վարժապետի և կը յառաջադիմէ նորա անձնուէր հոգատարութեամբ և արթուն հսկողութեամբ, ունի 110 աշակերտ որոց տարեկան հարցաքննութիւնն և պարգևաբաշխութեան հանդէսը Հոկտեմ. 9 էն սկսեալ մինչեւ 23 հետղհետէ կատարուեցաւ։

Հոկտեմ. 9 ին բոլոր վարժապետք և այլ ձեռնհաս ազգայինք հրաւիրուելով՝ ընտելարանի աշակերտք հարցաքննուեցան, որոց կարդացածն է այբենարան, հեգերէն և ընթերցարան. Հոկտեմ. 16 ին վերստին հաւաքուելով նոյն հրաւիրեալք. Բ. դասու աշակերտք հարցաքննուեցան, որոց առած ուսմունքներն են՝ Սրբազան և Ազգային պատմութիւն, Թուաբանութիւն, աշխարհագրութիւն, քերականութիւն վերլուծութեամբ հանդերձ և ճարտասանութիւն. որոց յառաջադիմութիւնքն արժանի է գոհունակութեան։

Իսկ Հոկտեմ. 20 ին կատարուեցաւ պարգևաբաշխութեան հանդէսն բաւական շքեղութեամբ. զոր ազգասիրաբար հաճած էին պատուել տեղւոյս առաջնորդական փոխանորդ Արժ. Կարապետ Ծ. Վարդապետին հետ նաեւ Ազգ. կրօնական, քաղաքական և թաղական՝ ազգասէր ժողովներն իրենց խրախուսական ներկայութեամբ իսկ աշակերտաց ծնողաց և այլ հանդիսատես ազգայնոց թիւը 600 ի կը հասնէր. Հանդէսը բացուեցաւ մի սրտաշարժ ազգային երգով և շարունակուեցաւ աշակերտաց ճառախօսութեամբ և երգերով, որոցմէ զկնի հետզհետէ ատենաբանեցին զանազան նիւթերու վրայ. նախ Արժ. փոխանորդ Ս. Հայրն՝ սիրոյ և միութեան վրայ. Բ. Վրթանիսեան Գէորգ էֆէնտին՝ իմաստութեան վրայ. Գ. սոյն դպրոցի երկրորդ դասատու Պ. Յակոբ բրուտեան՝ դաստիարակութեան և ազգութեան վրայ. Դ. Ռուբինեան դպրոցի երկրորդ դասատու Պ. Գէորգ ոսկերչեան՝ ազգասիրութեան վրայ. որք առհասարակ մեծ սիրով և համակրութեամբ ընդունուեցան ունկնդիրներէն.

Զկնի աւարտման հանդիսին, մեծապատիւ հանդիսականներէն ոմանք ՚ի նշան իրենց գոհունակութեան, ազգասիրաբար նուէրներ մատուցին դպրոցին, որոց ցուցակն հետեւեալն է.

| | |
|---|---|
| Մեծապատիւ անդամք քաղ. ժողովոյ | 1 ոսկի |
| " " թաղ. խորհրդոյ | 7 ընթերցարան կտոր |
| " " Թանգարանի ընկերութեան | 23 գիրք |
| " Պ. Գէորգ Կիւլէսէրեան | 15 " |
| " անդամք լուսաւորչական ընկերութեան | 12 " |
| " " տասանորդի " | 6 " |
| " Պ. Գրիգոր քրտօյեան | 7 " |

digitised by A.R.A.R.@

| | |
|---|---|
| Բարեջան վարժուհի օրիորդաց դպրոցին | կտոր 7 գիրք |
| Մեծապատիւ Պ․ Գէորգ Երանոսեան | 36 փոքր պատկերներ |
| „ Գէորգ էֆէնտի Վրդանիսեան 1 արծաթ մէձիտ, և | 4 գիրք |
| „ Պ․ Պետրոս Տ․ Սարգսեան և ընկերք իւր 1 արծաթ մէձիտ ։ | |

Թէ Հայկազեան բազմաչխատ ընկերութիւնը և թէ այլ զգայուն Ազգայինք եւս մասնակցեցան սոյն նուիրատուութեան ազգասիրաբար, որոց 'ի տրիտուր կը մաղթեմք Հայկայ Աստուծոյն՝ որ Ազգ․ սիրոյն այս սրբազան հուրը միշտ վառ պահէ նոցա սրտից վառարաններուն մէջ, 'ի մխիթարութիւն բազմավիշտ Հայութեան․

Մնամ միշտ երախտապարտ Սիննդ
1877 Նոյեմ․ 1 Սարգիս
յԵրեւան ։ Ս․ Յակոբեան․

Հետեւեալ ցուցակն ևս՝ Եդեսիայէն ղրկուած է հրատարակելու խնդրանօք․

Անուանք նուիրատուաց Եդեսիոյ Նորահաստատ Թանգարանին․

| | |
|---|---|
| Ամենապատիւ Եսայի Սրբազան Պատրիարք | մի մեծ արեւնկար պատկեր |
| Գերա․ Խորէն Ս․ Արք եպիսկոպոս․ Նարպէյ | „ ստուերք Հայկական կտոր |
| „ „ „ „ „ Մխիթարեան | 145 գիրք և տետրակ |
| Մեծա․ Յակոբ էֆէնտի իւթիւճեան | 81 „ „ „ |
| „ Կարապետ „ „ խմբա․ Մասիսի | 6 „ |
| „ „ „ փանոսեան „ Մանզումէի | 14 „ |
| Սարկաւագ Գէորգ Շահանեան | 7 „ |

Տէր, խնդրեմք հաճեցէք պատուական Սիոնիդ միջոցաւ Թարգման հանդիսանալ մեր սոյն հրապարակական շնորհակալութեան զոր կը մատուցանեմք երախտագէտ սրտիւ ազգասէր նուիրատուաց․

Որով և Ձեզ մնամ շնորհապարտ
1677 Նոյեմ․ 1 Ատենադպիր
յԵրեւան ։ Թանգարանի ընկերութեան
Յակոբ Վարժապետ Արեւեան․

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Աւորւոց Եպիսկոպոսի վախճանելէն 'ի վեր՝ տեղը Թափուր մնացած էր․ հանգուցելոյն ձեռնասուն Գէորգ վարդապետը իւր գովանի վարուք և բարեմասնութեամբք արժանի լինելով եպիսկոպոսական սրբազան կոչման Հոկ․ 30ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ իրենց Պատրիարքի ձեռամբ, այս հանդէսին ներկայ էին մեր Ամեն․ Սրբազան Պատրիարքը, գրեթէ ամբողջ Միաբանութիւնը եւ Հայ ժողովուրդը․ Ներկայ ամսոյ տեղէս մեկնեցաւ Պատրիարքը 'ի Կ․ Պօլիս ։

— Անցեալ տարւոյ անձրեւաց նուազութեան պատճառաւ .քաղաքիս ժողովուրդը ներկայ ամբողջ տարին ժամանակի այլ և այլ նեղութիւններուն հետ ջրոյ սակաւութեան մասին եւս կը տագնապէր․ բայց գոհութիւն Աստուծոյ այս ամսոյ տեղացող առատ անձրեւները ժողովրդեան այս մեծ նեղութիւնը բարձին, և կը յուսայուի որ յաջորդ տարուան առատ հունձքերն եւս ներկայ տարւոյ ամլութիւնը կը լցուցանեն․

digitised by A.R.A.R.@